Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿՈԴ
050.0125 Ա. 29.07.2025

29 հուլիսի 2025 թվականի թիվ 125 Ա

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԻՎ 27 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «իթ» կետով,

հաշվի առնելով այն, որ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը 16.05.2025թ., 21.05.2025թ., 27.06.2025թ., 30.06.2025թ., 11.07.2025թ. և 15.07.2025թ. դիմել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ բանկային գործունեության թիվ 27 լիցենզիան վերաձևակերպելու միջնորդությամբ,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության կոմիտեի եզրակացությունը (2025 թվականի հուլիսի 23-ի թիվ 33 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Վերաձևակերպել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված բանկային գործունեության թիվ 27 լիցենզիան՝ պայմանավորված «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը որպես «ԷՎՈԿԱԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն վերակազմավորվելու և ֆիրմային անվանման փոփոխության հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ մուտքագրվելու կամ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ
Երևան

Արմեն Նուրբեկյան